



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

## Ա.Ա.Գ.Ա.ՅԻՆ

ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

ԲՍՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՑ [ՎԱԹՍՈՒՆԸԻՆՆԵՐՐՈՐԴ]

22 ՄԱՐՏ 1874



ԻՐԱՒՈՒՆՔ  
ՈՒ  
ՊԱՐՏԻՔ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ՄԻԻԼԵՆՑԻՍԵԱՆ

— 1874 —



ԱՆՊՋԱՆՈՒՄ ԹԻՄՊՆԱԳ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԷՆ

ՆԻՍ ԿԹ .

22 ՄԱՐՏ 1874

ՆԱԽԱԳԱՀ . — Տ . ԹԱԴԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ (առժամանակեայ կարգեալ)  
ԱՏԵՆԱՊԵՏ . — ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՖ . ( " " )

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՅ

1. Պատրիարքական ընտրութեան խնդիր :
2. Ազգ . Սահմանադրութեան փոփոխեալ տրամադրութիւնք :
3. Կրօնական եւ Բաղաքական ժողովոց պակասած անդամոց ընտրութիւն :
4. Ազգամարայ Կաթուղիկոսական խնդիր :

Պատրիարքական Տեղապահ Տ . Ներսէս Արքազան , նոյնպէս եւ Ատենապետ Աղաբէկեան Սարգիս ԷՖ . բացակայ ըլլալով , Կրօնական ժողովոյ Ատենապետ Տ . Թադէոս եպիսկոպոսի առժամանակեայ նախագահութեամբ եւ երիցագոյն երեսփոխան Յովակիմեան Յովհանէս ԷՖ . ի առժամանակեայ ատենապետութեամբ Ատենապետ Բացուեցաւ ժամը 7 1/2 ին 'ի ներկայութեան 60 երեսփոխանաց , մեծամասնութեան ժողովոյ , որոց թիւն ընդհուպ բազմանալով , վերջապէս 71 ի յանգեցաւ :

Ատենապետ ԷՖ . այսօրուան նիստին Ատենապետութեան պաշտօնին կոչուելուն առթիւ իւր շնորհակալութիւնը յայտնելէ ետեւ , կարգաւ խորհուրդին ներկայացուց զիւրանին եկած հետեւեալ պաշտօնական գրութիւններն որոնք հետզհետէ կարգացուեցան .

Ահաւասիկ անոնց պատճէնները .

Ա .

Նախնի Պատրիարքական Տեղապահ Ներսէս Արքազանի .

Վսեմափայլ Ատենապետ Ազգային Պատկառելի Ընդհանուր ժողովոյ

Լսելով որ եկեղեցական Համագումար եւ Ազգային Կեդրոնական վարչութեան խառն ժողովներն նուաստիս անունը Պատրիարքական ընտրեցեաց ցանկերուն մէջ դրեր են , շնորհակալութեամբ հանդերձ այսօր կը համարիմ աղաչել զՁեզ եւ զպատկառելի ազգային Ընդհանուր ժողովն որ այս գիրք քուէարկութենէ յառաջ կարգալով արժանաւորագոյն եկեղեցականի մը վրայ դարձնել բարեհաճիք Ձեր ուշադրութիւնն , զի ես անարժան ասկիկար եւ մանաւանդ տկար լինելով անկարելի է որ այգպիսի պաշտօն ընդունիմ եւ կարող լինիմ վարել . դարձեալ կաղաչեմ , կանխաւ զեկուցէք ,



մի՛ գուցէ պարապ տեղն ժամավաճառ լինելով  
զիս անհնազանդ համարին վերջը :

21 մարտ 1874 Աղօթարար Խ. ծառայ  
Խառնակ ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Նախնի Առք. Վարդապետ Բաղդասար Ժողովոյ  
Վսեմաշուք Ատենապետ  
Ազգային Պատկառելի Ընդհանուր ժողովոյ

Քաղաքական ժողովս Պատկառելի Ընդհանուր ժողովոյդ կողմէն ընտրուելէն ետեւ անմիջապէս կրօնական ժողովոյ հետ միանալով 'ի 27 նոյեմբերի անցեալ տարուոյ ընտրեց 'ի Պատրիարքական Տեղապահութիւն Գեր. Նիկողայոս Եպիսկոպոսն Աղասեան, եւ ընտրութեան տեղեկագիրն Բ. Գրան մատուցանելով կայսերական հաստատութեան հրամանագիրն ստացաւ : Սակայն յետ սուղ միջոցի Նորին Արքայնութիւնն կարճատեւ հիւանդութեամբ վախճանելով, Խառն ժողովն ստիպուեցաւ նոր Տեղապահ մ'ընտրել եւ այս պաշտօնին կոչուեցաւ Գեր. Ներսէս Արքայան Վարժապետեան, որ խիստ կարճ ժամանակի մը համար ընդունեց սոյն պաշտօնը իւր անձնական տկարութեանը պատճառաւ եւ Բ. Գրան եւս Նորին Արքայնութեան Տեղապահական պաշտօնին հաստատութեան ղաթիւ տուած հրամանագրոյն մէջ յատկապէս յիշեցուցած էր Ազգային Վարչութեան անյապաղ Պատրիարքի ընտրութեան գործողութեանց ձեռնարկել. սոյն հրամանը կրկնուեցաւ յետոյ քանիցս թէ՛ բերանացի եւ թէ՛ Ընդհանուր ժողովոյ բացման համար տրուած հրամանագրին մէջ, զոր ներփակեալ կուղարկեմք :

Ուստի Քաղաքական ժողովս կրօնական ժողովոյ հետ խորհրդակցութեամբ ստիպողական համարելով Պատրիարքական ընտրութեան նախապատրաստութիւնն ընել, եւ ըստ տրամադրութեան 2րդ յօդուածոյ Ազգային Սահմանադրութեան թէ՛ Նկեղեցական Համագումար ժողովոյ եւ թէ՛ Քաղաքական ժողովոյս կողմէ պէտք եղած ընտրելեաց ցանկերը պատրաստուած ըլլալով, կը վուժայ զանոնք Ձեր Վսեմութեան յանձնել Պատկառելի Ընդհանուր ժողովոյդ ներկայացնելու համար, եւ կը խնդրէ որ այս օրուան Ընդհանուր ժողովն յառաջ

քան զայլ ամենայն խնդիր՝ Պատրիարքական ընտրութեան խնդիրը կարգադրէ, որ խիստ ստիպողականութիւն ունեցած է ներկայ վիճակիս մէջ Ազգային վարչութեան համար, եւ այս նպատակաւ Վարչութեան կողմէ Ընդհանուր ժողովոյ ներկայացուած խնդրոց կարգին մէջ առաջնութիւն ստացած է :

Քաղաքական ժողովս ընտրուելիք Պատրիարքին Սահմանադրութեան վրայ ընելիք ուխտին անօթիւ հաւանական երեւցած դժուարութեան առջեւն առնելու եւ ընտրուելիք Պատրիարքին Սահմանադրութեան օրինաց հաւատարիմ մնալուն դրաւական մ'ըլլալու համար այս օրինական ուխտին ձեւն ալ որոշելով կը յանձնէ Պատկառելի ժողովոյդ իմաստութեանը :

Ահաւասիկ նոյն ուխտին ձեւը .  
« Առաջի Աստուծոյ եւ 'ի ներկայութեան Ազգային ժողովոյս հրապարակաւ ուխտեմ հաւատարիմ մնալ Տէրութեան եւ Ազգիս, եւ ճշմարտապէս հսկել թէ՛ ներկայ Ազգային Սահմանադրութեան մինչեւ հիմայ Ընդհանուր ժողովոյ կողմէ ընդունուած եւ այսուհետեւ ընդունելի վերաքննեալ կէտերուն եւ թէ՛ Տէրութեան եւ Ազգին կողմէ վաւերացուելիք ապագայ վերաքննեալ Սահմանադրութեան անթերի գործադրութեանը » :

Հաւաստի լինելով որ Ազգային Վարչութեան սոյն կարեւոր առաջարկութիւնն անյապաղ իւր լուծումը պիտի դանէ Պատկառելի ժողովոյդ իմաստութեանն ու խոհեմութեանը շնորհիւ :

Մնամք 'ի զխմաց Քաղ. ժողովոյ  
22 մարտ 1874 Ազգ. Վարչութեան  
Առեւ-դռէր Առեւ-դռէր  
Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Ս. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ  
Գ.

Հրամանագիր Բ. Գրան, Ներսէս Արքայան  
Տեղապահութեան հաստատութեանը համար  
Էրմէնի Պատրիարքի գայմագամը  
Տիրայէթլու Ներսէս Էֆէնտի  
Տիրայէթլու Էֆէնտի .

Պատրիարքի գայմագամը Նիկողոս Էֆէնտին վեֆաթը ճիւղէթի իլէ՛ գայմագամը մէկքիւրէ գաթը տօսթանէլէրինին ինթիխապ օլուն-

տըղընա տայր մէճիխի մուխթէլիթին պիր գըթա մագպաթապ ախզ վէ միւթէլէա գըլընարագ, իշպու ինթիխապ բէք մինասիպ վէ եօլունտա կէօրիւնմիւշ օլմաղլէ, մէվաու էօնտէի տիրայէթ վէ քիֆայէթլէրի օլման մէսալիհի միլլէթին հիւանիւ բույթ վէ թէմէլլէթի իլէ պէրապէր Պատրիարք ինթիխապը խուսուսընտա տախի՛ պիր ան էվլէլ իգթիզայի հալին իճրա վէ ինհասընա սարֆը մէսայի վէ մագտէրէթ իլլէմէլլէրի սիաղընտա թէգըթէրէի մախուսէթէրգիմ գըլընար :

1294 մուհարրէմ 11 (ստոր.)  
վէ 1289 շուաբթ 16 ՄԷՀՄԷՏ ԲԱՇԵՏ

Հրամանագիր Բ. Գրան, Ընդհանուր ժողովոյ վերջին բացման և անմիջապէս Պատրիարքի ընտրութեան կատարմանը համար

Էրմէնի Պատրիարքի գայմագամըղընա .  
Տիրայէթլու Էֆէնտի .

Պատրիարքի ինթիխապը մատտէսի իլէ տիկէր պաղը խուսուսաթըն թանգիմ ու թէսվլլէսի իշիւն պիր դաշ տէֆա մէճիխի ումու մի ագտի հագընտա ինթիզանը հալի՛ ախզ օլունտա թագրիլի Ասիանէլէրի միւթալէա կիւզարը սէնալէրի օլմուշ, վէ սուրէթի իսթիզան միեսիպ կէօրիւնմիւշ օլմաղլէ, պէր մուճիպի ինթիզան իճրայի իգթիզայի հալէ վէ էվլէլ պէ էվլէլ էմրի ինթիխապըն իճրա վէ Պապը ալլիյէ արզ ու ինհասը խուսուսընա հիւմմէթ իլլէմէլլէրի սիաղընտա թէգըթէրէի մուհիպպի թէրքիմինէ իպթիտար գըլընար :

1294 սէֆէր 10 (ստոր.)  
վէ 1290 մարտ 16 ՄԷՀՄԷՏ ԲԱՇԵՏ

Տեղի-գիր Եֆէնտի-ի-ն Համագումար ժողովոյ  
Ամենապատիւ Տեղապահ Արքայան Հայր Նախագահ Ազգային Ընդհ. ժողովոյ

Նկեղեցական Համագումար ժողովս, ըստ հրաւիրանաց Ամեն. Տէրութեան Ձերոյ, 'ի մի վայր գալով՝ այսօր 'ի Պատրիարքարանս՝ գաղտնի քուէարկութեամբ կ. Պօլսոյ Աթոռոյն Պատ-

րիարքական ընտրելեաց ցանկ մը պատրաստեց ըստ հետագային .

- |                                   |                  |
|-----------------------------------|------------------|
| 1. Ամեն. Տ. Ներսէս Արքեպ. Տեղապահ | 23               |
| 2. Գեր. Տ. Յարութիւն              | » Կարնոյ 49      |
| 3. » » Խորէն                      | » Նար-պէյ 46     |
| 4. » » Արիստակէս                  | » Գաղատիոյ 9     |
| 5. » » Խորէն                      | » Արմաշու 8      |
| 6. » » Մեսրոպ                     | » Եգիպտոսի 7     |
| 7. » » Գրիգոր                     | » Քարակէօմր. 5   |
| 8. » » Թաղէոս                     | » Պալատու 4      |
| 9. » » Յովհաննէս                  | » Եղեւսեան 4     |
| 10. » » Յակոբ                     | » Տիգրանակերտ 3  |
| 11. » » Սահակ                     | » Միաբ. Երուս. 2 |
| 12. » » Գրիգոր                    | » Անգրիանուպ. 2  |
| 13. » » Արքայան                   | » Շապուղարահ. 2  |
| 14. » » Երեմիա                    | » Միաբ. Երուս. 1 |
| 15. » » Մամբրէ                    | » Մամիկոնեան 1   |

Ըստ յանձնարարութեան ժողովոյս փուլթացեալ այսու տեղեակ առնել զՏէրութիւն Ձեր արդեանց իրացն .  
19 Մարտ 1874

Ամենապատիւ Արքայնութեանը  
մնամբ անձնուէր որդիք  
'ի զխմաց Նկեղ. Համագումար ժողովոյ  
Առեւ-դռէր Առեւ-դռէր  
ԻՌԲԵՆ Վ. ԿԻՐՈՅԵԱՆ Մ. Վ. ԻՋՄԻՐԼԵԱՆ

Պատրիարքի-ն ընտրելէ-ն ց-ն-ց-ի Բ-ն. ժողովոյ  
Վսեմաշուք Ատենապետ  
Ազգային Պատկառելի Ընդհանուր ժողովոյ

Ազգային Քաղաքական ժողովս ըստ տրամադրութեան 2րդ յօդուածոյ Սահմանադրութեան Նկեղեցական Համագումար ժողովոյ կողմէն պատրաստուած Պատրիարքական ընտրելեաց ցանկին մէջէն գաղտնի քուէարկութեամբ հինգ ընտրելի որոշելով ըստ հետեւեալ ցուցակի .

- |                             |            |
|-----------------------------|------------|
| 1. Ներսէս Եպիսկոպոս Տեղապահ |            |
| 2. Արիստակէս                | » Գաղատիոյ |
| 3. Յարութիւն                | » Կարնոյ   |
| 4. Մեսրոպ                   | » Եգիպտոսի |
| 5. Խորէն                    | » Արմաշի   |
- աւասիկ կը ներկայացնէ զայն Պատկառելի Ընդհանուր ժողովոյդ .

22 Մարտ 1874 'ի զխմաց Ազգ. Քաղ. ժողովոյ  
Առեւ-դռէր Առեւ-դռէր  
Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Ս. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ



Ընթերցողներն աւարտելէ ետեւ Ատե- նապետ էֆ. յայտնելով որ Բ. Գրան հրամա- նին համեմատ Պատրիարքական ընտրութիւնն այսօրուան խնդրոց կարգին մէջ առաջնութիւն ստացած է, հրաւիրեց զԵրեմիոսիանս իրենց կարծիքներն այս մասին յայտնել :

**ԽՆԴԻՐ ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ**

**ՄԱՋԼՄԵԱՆ Յ. ԷՖ.** — Ազգային վարչութիւնն երկու տողով կիմացնէ թէ Պատրիարքի ընտրութեան ստիպողականութիւն տեսեր և յարակից ուրիշ խնդրոց հետ այս խնդիրը նախադասելով Ընդհանուր ժողովոյ վերստին բացումն առաջարկեր է Բ. Գրան, և Բ. Գրան ալ ընդունելով հրամայած է որ նախ քան զամենայն Պատրիարքի ընտրութիւնը կատարուի : Արդարև վարչութիւնն առաւել քան զմեզ մտառատ և փորձառութեամբ կարող է տեսնել խնդրոց կարևորագոյնը, և ըստ այնմ Պատրիարքական ընտրութիւնն ամենէն աւելի կարևոր համարել և առաջարկել Ընդհանուր ժողովին : Սակայն մեք երեսփոխանքս ալ ոչ նուազ փորձառութիւն ունինք և բաւականէն աւելի ունեցանք երեք չորս տարիներէ հետէ շարունակ նիստեր ընելով, և կրնանամ ըսել թէ այս փորձառութիւնը շատ սուղի նստաւ Ընդհանուր ժողովոյս . երբ ամեն խնդիր առանց յուզման և կնճոյ լուծուի մեծ երջանկութիւն է Ազգին համար . բայց փորձն ընդհակառակն հաստատեց թէ առանց յուզման կարելի չեղաւ որ և է խնդիր լուծել . խոհեմութիւնն այն է որ փորձերէն օգուտ քաղենք և մեր ընթացքն աւելի արդիւնաւորութեամբ յառաջ վարենք : Արդ, փորձերը ցոյց տուին որ երեք տարի ազգին օրէնքը վերաքննելով դարձեցանք և չկրցինք ցարդ վերաքննութիւնն աւարտել և օրինաց թերութիւնները լեցընել, որոնք շատ մը սխալներ գործել տուին և շիթութեան մէջ ձգեցին մեզ . ուստի ինչպէս որ նա մը առանց ուղեցոյցի չկրնար անխտոր ընթանալ, նոյնպէս ազգ մը, կառավարութիւն մը չկրնար ուղիղ ընթացք ունենալ եթէ կատարեալ օրինա- գիրք մը չունենայ . մեր ազգն ալ իւր օրինաց թերութիւններովը միշտ շիթութեան միշտ յուզման մէջ պիտի մնայ և մեք ժամավաճառ պիտի ըլլանք ու վնասներով

պիտի տուժինք առանց օգտակար վնաս- ճանի մը մտտենալու : Ես կը նկատեմ որ առանց քիչ շատ կատարելագործեալ օրէնք մը ունենալու ոչ միայն Պատրիարք և երեսփոխանութիւն հանգիստ չպիտի ըլլան, այլ և ազգն ալ չպիտի կրնայ խաղաղիլ . այս վիճակը միշտ կասկածի և երկդիմութեան մէջ պիտի պահէ զմեզ թէ արդեօք պիտի կրնանք թերի օրէնք մը գործադրել . միւս կողմէ պաշտօնէութիւնն ալ պիտի շուարեցնենք և չպիտի կրնանք ուղղութիւն պահանջել . վասն զի չկայ վարչութիւն մը՝ որ կարենայ ուղղութեամբ ընթա- նալ ներկայ շիթ վիճակին մէջ : Հիմա կը տեսնենք որ վարչութիւնն ստիպողականու- թիւն տուած է Պատրիարքի ընտրութեան և կառավարիչ որ առաջին խնդիր ըլլայ այն . բայց ես այդ ստիպողականութիւնը չէ թէ Պատրիարքի ընտրութեան, այլ Սահմանադրութեան վերաքննութեան մէջ կը տեսնեմ, և արդէն վերաքննիչ Յանձնաժողովն ալ իւր գործն աւարտած և տեղեկագիր մը բերած է մեզ, զոր կրնանք անմիջապէս նկատողութեան առնել, միւս կողմէ վարչութիւնն ալ ուրիշ տեղապահով մը կը կարգադրէ ազգային գործերը, մինչև որ վերաքննութիւնն աւարտելով ընտրենք Պատրիարքը և ունենանք օրէնք մը՝ որուն քիչ շատ թերութիւնները լրացած են, և Պատրիարք մը՝ որ կարենայ այդ անթերի օրինաց գործադրութեանը հսկել : Առանց սասոր չեմ կրնար ըստիս համոզում մը գոյացնել թէ պիտի կարենանք ուղիղ և անշիթ ըն- թացք մը ունենալ ապագային մէջ . ուստի կառավարիչն որ խոզովն այս կէտին վրայ իւր ուշադրութիւնը դարձունէ, և անցելոյն վրայ ակնարկ մը նետելով և յիշողութեան բերելով այն փոթորիկները՝ զոր անցուցինք, ըստ այնմ վճռէ թէ իրաւունք ունիմ կամ ոչ Պատրիարքի ընտրութիւնն ետքի ձգել առաջարկելուս մէջ և հետևաբար եթէ իմ առաջարկութիւնս օգտակար և բարւոք դատի, անմիջապէս վերաքննութեան խնդիրը ձեռք առնելով, նախ զայն շուտով աւարտել և յետոյ Պատրիարքի ընտրութեան ձեռնարկել բարեհաճի :

**ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.** — Ազգային վարչութեան կողմէ եկած առաջարկութեան մը Ընդհանուր ժողովոյ կողմէն մերժուիլը կը նըշանակէ վարչութիւնը ձգել եթէ ընդդիմա-

նայ նա . իսկ թէ որ ետ առնէ, այն ատեն ոչ վարչութեան կողմէ եկած և ոչ ընդդի- մութիւն դատած խնդիր մը նկատելով իբրև օրուան խնդիր պիտի յուղեմ զայն և իմ կարծիքս պիտի յայտնեմ : Ամեն ազգ տեղապահական գոյութիւնն այն ատենուան համար միայն կրնուի երբ վարչութիւնն առժամանակեայ և անհաստատ դրութեան մը մէջ է . մենք ալ Սահմանադրութենէն առաջ ունեցանք Տեղապահ մը, երբ վարչութեան վիճակն անորոշ և առժամանակեայ էր . բայց մի թէ այսօր ալ մեր վիճակն անորոշ է . ոչ քանի որ ոչ առժամանակեայ և ոչ ալ անհաստատ վիճակի մէջ չենք և Սահմանադրութիւն ունինք, Պատրիարքի ընտրութիւնն ստիպողական և անհրաժեշտ է : Սակայն Սահմանադրութիւնն ընտրուելիք Պատրիարքին վրայ սխալի պարտք մը դրած է . այսօր օրէնք մը ունինք, որ մեծ մասով ատեան բանալու համար 71 թիւը սահմանած է, և այս օրէնքը տէրութենէն ալ վաւերացուած է . բայց սասոր անկարելիութիւնը տեսնելով որոշեցինք ընտրեալ երեսփոխանաց մեծագոյն մասովն ատեան բանալ . մեք արդէն հակասութեան մէջ կը գտնուինք : Ըսածս օրինակով մը բացատրեմ որ հասկցուի . բայց կաղաչեմ իրականութեան շտանիք . ենթադրենք թէ այսօր Պատրիարք մը ընտրեցինք տուանց 71 ի ներկայութեան, և փոքրագոյն մաս մը երթայ գանգատի Գուռը թէ 71 ով չըրին ընտրութիւնը, ինչ պիտի ըսէ Գուռը . հարկաւ պիտի ըսէ թէ գացէք օրէնքը գործադրեցէք : Այս անորոշ վիճակը Մազմեան էֆ. ի ըսածին հակառակն է . նա ըսաւ թէ օրինաց թերութիւնը մեզ շիթ վիճակի մէջ դրած է . ես ընդհակառակն կըսեմ թէ օրինաց կարևորութիւն չտալն եղաւ պատճառ մեր շիթութեան . օրէնքը կը տրամադրէ որ վերաքննութեան պայմանաժամը բանալուն վերաքննեալ մասերը կայսերական հրամանաւ վաւերացուին . կը հարցնեմ, մենք այսպէս ըրինք . — ոչ . ուրեմն այս շիթութիւնն օրինաց թերութեանէն չէ ինչպէս կըսուի, այլ մեր ընթացքէն : Հիմա վարչութիւնն առաջարկութիւն մ'ալ կրնէ Պատրիարքին ընելիք ուխտին ձևի առթիւն . մինչդեռ Սահմանադրութեան և իր յօդուածը Պատրիարքին ընելիք ուխտին ձևը սապէս որոշած է . «Ա-

« առջի Աստուծոյ և 'ի ներկայութեան 'Ազգային ժողովոյս հրապարակաւ ուխտեմ հաւատարիմ մնալ Տէրութեան և Ազգիս, և « ճշմարտապէս հսկել Ազգային Սահմանադրութեան անթերի գործադրութեանը » : Եւ Տէրութիւնն ալ նոյնը վաւերացուցած է, վարչութիւնը նոր ուխտ մը կառավարիչ, որ վերաքննութիւն ըսել է, և Պատրիարքական ընտրութեան ստիպողականութենէն առաջ վերաքննութեան ստիպողականութիւնը կը ցուցընէ : Մենք կարող չենք բառ մը աւելցնել կամ պակսեցնել առանց վերաքննելու . հետևաբար եթէ վարչութիւնը Պատրիարքի ընտրութեան այնչափ ստիպողականութիւն չտայ որ մինչև իւր հրաժարականը հետևի և կաղաչեմ որ մինչև հոն չտանի խնդիրը, այն ատեն վերաքննութեան խնդրով զբաղինք . իսկ թէ որ վարչութիւնն իւր բերած առաջարկութեան ստիպողականութիւնը պնդէ, այն ատեն ես կառավարիչն որ արդէն վերաքննութեամբ սրբազրուած քանի կէտ որ կան՝ զանոնք ժողովելով վաւերացնել տանք կառավարութեանն Պատրիարքին ընտրութեան հետ մէկ տեղ : Ուրեմն վարչութեան տալիք պատասխանին կ'սպասեմ նորէն խօսք առնելու համար :

**ՄԱԳՍՈՒՏԵԱՆ Ս. ՊԵՅ.** (Առնալիք Գուռի Գուռի խոսքէն) — Մեզնէ խնդրուած բացատրութիւնը հարկ կը համարիմ տալ . արդէն մեր ժողովն ուղեց յապաղել . թէ և փորձեցինք որ ժամանակ մը Տեղապահով երթանք, բայց դժբաղդաբար ընտրուած առաջին Տեղապահը վախճանելով և նոր ընտրուածն ալ չուզելով այլ ևս շարունակել իւր հիւանդութեանը պատճառաւ, միւս կողմէ Բ. Գուռն ստիպելով որ Պատրիարքի ընտրութիւնը ժամ յառաջ կատարուի, տեսանք որ վարչութեան վիճակը տարտամ կերպարանք մը առնելով անխիստանութեան պիտի երթայ յանգի . ուստի պատասխանատուութիւնը մեր վրայ առնուլ չուզելով փութացինք իրաց վիճակն Ընդհանուր ժողովոյ յայտնել և ժամ յառաջ Պատրիարքի ընտրութիւնը խնդրել : Ուրեմն կը կրկնենք մեր առաջարկութիւնը և անոր ուշադրութիւն ընծայուիլ կը խնդրենք . այս վիճակն անտա- նելի է և մեք չենք կրնար պատասխանատու



ըլլալ եթէ Ընդհանուր ժողովն ուզէ անմիջապէս վերաքննութեան խնդրովն զբաղիլ, որ ո՛ր գիտէ թէ տակաւին որչափ ժամանակ պիտի տևէ :

ՄԱԶԼՄԵԱՆ Յ. ԷՅ. — Ըսել է թէ Քաղաքական ժողովն եթէ իւր առաջարկութիւնը չընդունուի, պիտի հրաժարի :

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՅ. — Ես ալ Պատրիարքի ընտրութիւնն առժամանակ անհարելի պիտի դատիմ, բայց ուրիշ կէտերու նկատմամբ : Երեսփոխանական ժողովն ասկէ առաջ 2 անգամ նիստ ունեցաւ, 67րդ և 68րդ նիստերը, որոնք օրինաւորութեան ճամբու մէջ չէին. պէտք է ըսել որ այս նիստն ալ սահմանադրական վիճակին մէջ չէ, հետևապէս այսպիսի մեծ խնդրոյ մը ձեռնարկել անխոհեմութիւն է : Գիտենք որ պայմանաժամին լրացուցած երեսփոխաններ կան, որք դեռ կը շարունակեն պաշտօնին, նայնպէս նորընտիր երեսփոխաններ կան, որք տակաւին չեն վաւերացուած և իրենց պաշտօնէն բացակայ կը գրուուին. նաև դիւանին երկու ատենապետները հրաժարական տուած են, և Ժողովը դեռ ոչ ընդունած և ոչ մերժած է անոնց հրաժարականը, հետևաբար դիւանը թերի վիճակի մէջ է : Ասանցմէ զատ նախորդ նիստերու ատենադրութիւններ կան որ տակաւին վաւերացուած չեն. Երեսփոխանական ժողովոյ պարտքն է նախ այս գործերը կարգադրելով ինքզինքն օրինաւոր վիճակի մէջ դնել և ապա կենսական խնդրոց ձեռնարկել :

Պաշտօնակիցներէս մէկն ըսաւ թէ այս տարտամութիւնները մեր անորոշ վիճակէն յառաջ եկած են քան թէ օրինաց թերութենէն. կը հարցնեմ թէ նոյն իսկ մեր անորոշ վիճակն ինչէ՞ն յառաջ եկած է, անշուշտ օրինաց թերութենէն : Սահմանադրութեան վերաքննութեան համար բացուեցան Ընդհանուր ժողովոյ նիստերը, վերաքննութիւնն ստիպողական խնդիր նկատուած էր գրեթէ և տարիէ ՚ի վեր, և այս կարծիքը քանի մը անգամ պլպլաց կայծի մը պէս և վերջապէս մարեցաւ. այսօր նորէն կ'զգանք վերաքննութեան ստիպողականութիւնը և չենք կրնար Պատրիարքի ընտրութիւնն ընել : Արդէն Վերաքննիչ յանձնաժողովն ալ օրինաւորութենէ չեղած է, իւր

ծրագիրն 7 անգամոց կողմէ կը ներկայանայ մինչդեռ 42 անգամներէ բազկացեալ է և 5 պակաս ունի իւր մէջ : Նոյնպէս Համագումար եկեղեցական ժողովոյ կողմէ ներկայացուած Պատրիարքոս եպիսկոպոսաց ցուցակն անկանոն և անընդունելի է. Համագումար ժողովն իրաւունք ունի դուրս ձգել ՚ի կրօնս դատապարտեալ եպիսկոպոսները միայն. ըսել կըլլայ թէ դուրս ձգածները դատապարտած է. ո՛ր է անոնց դատապարտութեան տեղեկագիրը, որ գիտնայինք թէ ի՞նչ յանցանօք դատապարտուած են : Կարծեմ Համագումար ժողովոյ իրաւունքն էր միայն եպիսկոպոսաց ցուցակը ներկայացնել և ոչ դատաւոր ըլլալ. կը ցաւիմ որ Համագումար ժողովոյ Ս. Հարք այս կէտին ուշադրութիւն չեն ըրած և թերի ցուցակ մը ներկայացուցած են : Վերջապէս ամփոփելով կեցրակացնեմ թէ ամենէն աւելի ստիպողական եղածն այսօր Պատրիարքի ընտրութիւնը չէ, ոչ ալ Սահմանադրութեան վերաքննութիւնը. այլ նախ և առաջ նորընտիր երեսփոխանները վաւերացնել և դիւանի անգամոց թերին լրացնել. և երբ այս ստիպողական կարգադրութիւնները լինին, այն ատեն խնդրոց կարգին վրայ ունեցած կարծիքս կրնամ բացատրել :

ՄԱԶԼՄԵԱՆ Յ. ԷՅ. — Պաշտօնակիցներէս մէկն ըսաւ թէ մեր այս չիֆ վիճակն օրինաց թերութենէն չէ, այլ մեր անյարմար կամ անպատրաստ կացութենէն. բայց թէ որ օրինաց թերութենէն չէ, ինչո՞ւ այսօր դայն լրացնելու համար սրբադրուած կէտեր կը ներկայացուն մեզ : Գալով Վարչութեան Քաղաքական ժողովոյ Ատենապետ պէյին ըրած յայտարարութեան կը պատասխանեմ թէ որ և է մարմին թող խնայեն Ընդհանուր ժողովին և սպառնալիքներ չթափեն, այլ աղատ թողուն որ երեսփոխանութիւնն ալ իր պարտականութիւնները կատարէ : Անկարելի է այս վիճակին շարունակութիւնը կըսեն. ինչո՞ւ, պատճառն էս չեմ կրնար հասկնալ. եթէ Տեղապահ Նիկողայոս Սրբազան չվախճանէր, անկարելութիւն կայ չպիտի ըսուէր. պատճառը կարծեմ Ներսէս Սրբազանին Տեղապահութենէ քաշուիլն է, եթէ այսպէս է լաւ. ուրիշ մը կրնայ ընտրուիլ և տեղապահութեամբ

շարունակուիլ մինչև որ երեսփոխանութիւնը ժամ յառաջ վերաքննութիւնը կատարէ : Ըստ իս Վարչութեան մէջ բերած պատճառներն այնչափ զօրաւոր չեն որ իմ համոզումս փոխեմ. ուստի կրկին կըսեմ որ Վարչութիւնը կրնայ Տեղապահ մը ընտրելով իր գործը շարունակել մինչև որ երեսփոխանութիւնն ալ օրինաց սրբադրութիւնները կատարելով իւր գործն աւարտէ :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՅ. — Միջանկեալ կերպով խի՛կնեմն է՛ք ի այն խօսքը պիտի հերքեմ, որով ցոյց տուաւ թէ Երեսփոխանական ժողովն օրինաւորութեան մէջ չէ, քանի որ վիճակաւ դադարուած երեսփոխաններ դեռ պաշտօնին կը շարունակեն և նորընտիր երեսփոխանք վաւերացուած չըլլալով բացակայ կը գտնուին իրենց պաշտօնէն : Ինքն ալ լաւ գիտէ թէ մինչև նորք գայ հինք կը շարունակէ. ամեն տեղ ալ ասանկ է : (Ընդհանուր, Իբէկճեան և Ալաճաճեան Եֆէօրիներու հոլմէ) Մի՛ ընդ միջէք զիս. այս այսպէս է, Վերջերս Յունաստանի մէջ ալ օրէնք մը հրատարակուեցաւ թէ վիճակաւ ելածները չեն դադարիլ մինչև նորերը չընտրուին և չվաւերացուին. ըսել է թէ ներկայք երբ օրինաւոր թիւ կը կազմեն, ժողովը շատ օրինաւոր է : Ասկէ առաջ խընդրոց կարգին մէջ նորընտիր երեսփոխանաց վաւերացում կայ եղեր, մնացեր է. սակայն ուրիշ խնդիրներ ալ կային՝ որ նոյնպէս մնացած են. այդ իրաւունք շտար ըսելու թէ ժողովն օրինաւորութիւն չունի : Նոյնպէս ուրիշ առարկութիւն մ'ալ յառաջ բերաւ խի՛կնեմն է՛ք. ըսաւ թէ վերաքննիչ Յանձնաժողովն ալ օրինաւորութենէ չեղած է, ըստ որում հինգ անգամ պակասած է իւր մէջէն. այս մասին կը պատասխանեմ թէ արդարեւ հինգ անգամ պակասած է, բայց ե՞րբ. — անոնցմէ ոմանք վերաքննութիւնն ըլլալէն ամեն բան լինալէն ետեւ. այդ հինգէն մէկը՝ Տ. Նիկողայոս եպիսկոպոսն է, որ վախճանած է, իսկ երկուքը ճամբորդած, և մնացած երկուքն ալ հրաժարած են : Իսկ տեղեկագիրն օրինաւոր է, թէ չէ՛, կրնայ այս կէտը պ'ըրզուիլ. բայց ասոնք միջանկեալ խնդիրներ են, որոնք թողունք առայժմ և դառնանք բուն խնդրոյն :

Ազգային Վարչութիւնը Պատրիարքի

ընտրութիւնն ստիպողական է կրտէ և կուզէ զայն նախադասել քան դամեն խնդիր. իսկ երեսփոխաններէն ոմանք վերաքննութեան առաջնութիւն տալ կուզեն, և իրենց պատճառները յայտնեցին. միայն վարչութիւնը իւր առաջարկութեան ստիպողական ըլլալուն պատճառները չյայտնեց դեռ. ևս կը հաւատամ որ Քաղաքական ժողովոյ Ատենապետ պէյին յայտարարութիւնն անկեղծ էր. « մտայ իր էինք ըսաւ ժամանակ մը ևս յազաղել Պատրիարքի ընտրութիւնը, բայց պատճառաւ մը ստիպուեցանք մեր դիտաւորութիւնը փոխել. և այդ պատճառն ալ Ներսէս Սրբազանին անաւերելի հրաժարականն եղած է » : Եթէ իրաց վիճակին մօտէն տեղեկ չըլլայինք, մենք ալ այդպէս է պիտի ըսէինք. բայց մօտէն գիտենք որ Ներսէս Սրբազան 21 օրուան համար ընդունած էր Տեղապահութիւնը. ըսել է որ Վարչութիւնը զասի գիտնալով, միտքը դրած էր որ 21 օրուան մէջ Պատրիարքական ընտրութիւնը կատարել տայ Ընդհանուր ժողովին, Ես կըսեմ թէ Վարչութիւնը լաւ կընէր որ այսպիսի պայման մը չընդունէր : Ներսէս Սրբազան ինձ ալ յայտնած է զայս, երբ իրեն աղջակցի որ շարունակէ, ըսաւ թէ 21 օր պայմանաւ յանձն առած եմ և չպիտի կրնամ շարունակել : Հիմա կը սենեմ որ ամեն բան յառաջ դացած է, Պատրիարքական ընտրութեաց ցուցակները պատրաստուած են, և միայն ընտրութեան քուէարկութիւնը մնացած է. բայց իսկ Վարչութեան մէջ բերած ստիպողականութեան պատճառները, որպէս զի կարենամ ըսալ այնմ իմ քուէս տալ. թո՛ղ բարեհաճի Քաղաքական ժողովոյ Ատենապետ Պէյը բացատրութիւն տալ թէ ի՞նչ ստիպողականութիւն կայ Պատրիարքի ընտրութիւնը փութացնելու, և թէ ինչո՞ւ Վարչութիւնը 21 օրուան պայմանաժամաւ ընդունեց Ներսէս Սրբազանի ընտրութիւնը :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ Ս. ՊԷՅ. (Արեւոյնի Քաղաքական ժողով) — Նախ՝ Պէյեան է՛ք ի այն հարցման թէ ինչո՞ւ Ներսէս Սրբազանի Տեղապահութեան ընտրութիւնը պայմանաժամով ընդունուեցաւ, կը պատասխանեմ թէ այդ պայմանաժամը Ներսէս Սրբազանն ինք թէ և առաջարկած էր, սակայն իւր ընտրութենէն



եռե, և բնական է որ ամեն ոք կրնայ այդպիսի պայմաններ առաջարկել, սակայն չընդունուի: Հետևապէս Վարչութիւնն ալ ընդունած չէր այդ 21 օրուան պայմանաժամը: միայն խոստացած էր Նորին Սրբազնութեան Պատրիարքի ընտրութիւնը չերկարել և օր յառաջ զինքն չազատ թողուլ: Իսկ գալով թէ ինչ պատճառ կայ Պատրիարքի ընտրութեան այսչափ ստիպողականութիւն տալու, կը պատասխանեմ թէ Վարչութիւնը նկատեց որ Տեղապահութեան պաշտօնն ո՞ր եկեղեցականաց ալ առաջարկուի, առժամանակեայ և ոչ տևական պաշտօն մը ըլլալուն՝ չեն ուզեր անձնութիւն իրեն կամ պատասխանատուութիւն առնուլ: Բայց ազգին ներկայ վիճակը մեծ անձնութեան կարօտ է: Ասկէ զատ Բ. Գրան հետ ունեցած յարաբերութիւնն իսկ Տեղապահով և Պատրիարքով յառաջ տանելուն մէջ մեծ տարբերութիւններ կան: Նաև Ազգային ելմտական վիճակին նկատմամբ ալ միասնեք կը տեսնուին, որոնք որ ստակի համար գիտուի, միշտ կառարկեն թէ ձեր վիճակը անորոշ է, Պատրիարք չունիք, և ըն: Ահա՛ այս պարագաներուն առջև շատ մը խոկալէ ետքը Վարչութիւնն ստիպուեցաւ Պատրիարքական ընտրութիւնը փութացնել: Ընդհանուր ժողովն ալ կը տեսնէ թէ ոչ նուազ քան զվերաքննութիւնը կարևորութիւն ունի սոյն խնդիրը. երկուքն ալ միանգամայն պէտք են. բայց ըստ մեզ Պատրիարքական ընտրութիւնն է առաջինը:

ԱՅՎԱՏԵԱՆ Մ. ԷՑ. — Վարչութիւնը խնդիր մը բերաւ Ընդհանուր ժողովին, քանի որ Վարչութիւնն է, Ընդհանուր ժողովը կը պարտաւորի անոր կարծեացը վերահասու ըլլալ, մանաւանդ երբ պատճառներ ալ մէջ կը բերէ, և ըստ այնմ ընդունիլ կամ մերժել անոր առաջարկութիւնը: Ասոր վրայ կարենալ խօսելու համար պէտք է ջնջել նախ այն ակնարկութիւններն որ ժողովին դէմ եղան: Ի՞նչ կ'ընեն էֆ. զիտել առաւ թէ ժողովն օրինաւորապէս որոշում ընելու դրից մէջ չէ, թէ վիճակաւ դադարեալ երեսփոխաններ կան որ պաշտօնին կը շարունակեն ցարդ, և թէ նորընտիր երեսփոխաններ կան որ տակաւին վաւերացած չըլլալով իրենց պաշտօնէն բացաւայ կը դադարեն, և այլն: Շատ իրաւացի են

այս դիտողութիւնները. սակայն Երեսփոխանական ժողովն իրեն համար պատասխանատու լինի իւր Նախագահը և Գիււանին կողմէն Ատենապետը, որոնց պարտքն է պատասխանել սոյն դիտողութեանց. այսու ամենայնիւ այսօր ոչ Նախագահը ներկայ է և ոչ Ատենապետը: Սահմանադրութեան 69 րդ յօդուածը կը տրամադրէ որ վախճանեալ կամ հրաժարեալ երեսփոխանաց անդ ամեն տարի տարեգլխէն երկու ամիս առաջ նոր ընտրութիւնները կատարուին: Նոյնպէս երեսփոխանաց մէկ հինգերորդ մասն երկու տարին անգամ մը պիտի փոխուի և նորագուի: Այս ամենն ընել որո՞ւ պարտքն էր, թէ և Վարչութեան բան մը չեմ կրնար ըսել, սակայն Բ. Գրանն հրաման առնելէ առաջ պէտք էր այս թերութիւնները լցուէին, որպէս զի իրաւացի դիտողութեանց առթիւ չտրուէր: Մէկ կողմէն կաղաչենք Վարչութիւնը որ իւր առաջարկութիւնը նկատողութեան առնուելու համար Նախագահ մը որոչէ, որպէս զի ժողովն իր օրինաւոր ձևն առնու, վասն զի ներսէս սրբազան հիւանդ ըլլալով իր տունը կը նստի և չգար. միւս կողմէն Համագումար ժողովն ալ առանց Նախագահի մնացած է, և ընտրելեաց ցանկին առթիւ եղած ակնարկութեանց դէմ պատասխան չը կայ, վասն զի անոնց պատասխանը Նախագահէն պէտք էր սպասել, ինչպէս ժողովին օրինական թերութեանց մասին եղած ակնարկութեանց պատասխանն ալ Ատենապետէն պէտք էր սպասել. սակայն ինչպէս արդէն ըսի, երկուքն ալ չկան. ուստի Վարչութեան կը մնայ Նախագահի գործը կարգադրել և երեսփոխանական ժողովն առանց Նախագահի չթողուլ, զի նոյն իսկ Պատրիարքական ընտրութիւնը Տեղապահի մը նախագահութեանը կը կարօտի. և եթէ ժողովն ընդունի որ ամեն բանէ առաջ Պատրիարքի ընտրութիւնը պէտք է, ո՞վ ինչ կրնայ ըսել. սակայն նախ ձեռն պակասութիւնները պէտք է լցուին, որպէս զի մեր մէջ եղած դիտողութիւնը վերջ գտնեն:

Տ. ՄԱՏԹԷՆՍ ՎԱՐԳ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ստոյգ է որ Սահմանադրութեան 2 րդ յօդուածին տրամադրութեան համաձայն, Պատրիարքի վախճանման կամ հրաժարման պարագային մէջ Տեղապահին պաշտօնն ուրիշ

բան չէ, բայց եթէ Պատրիարքական ընտրութեան գործոց նախագահել. սակայն Ազգն ամեն պարագայի մէջ այս դիրքն ունեցած չէ: Սորդիս Պատրիարքին հրաժարելէն ետքն ալ Տեղապահ գրուեցաւ հանգուցեալ Ստեփաննոս Սրբազանը, որ օրէնքը վերաքննութեան ներքև ըլլալուն համար երկու տարուոյ չափ ժամանակ պաշտօն վարեց մինչ ցաւարտ վերաքննութեան և ցընտրութիւն նոր Պատրիարքի: Հանգուցեալ Իգնատիոս Պատրիարքէն ետքն ալ հաւանական երեցաւ Պատրիարքի ընտրութիւնն ընել յառաջ քան զվերաքննութիւն, և բնութեցաւ Թրիմեան Սրբազան. բայց Նորին Սրբազնութիւնը չորս տարի պաշտօն վարելէ ետև դարձեալ անկատար մնաց վերաքննութիւնը, որուն համար իրերը մինչև այս վիճակին հասան: Ստոյգ է որ Կեղերոնական Վարչութեան վիճակը շիտթ և համարեա թէ անկերպարան է, ինչպէս Քաղաքական ժողովոյ Վսեմ. Ատենապետ Պէյը կը յայտնէ, սակայն աւելի խառնակ պիտի ըլլայ այս վիճակն եթէ գալիք Պատրիարքը չունենայ իւր ձեռքը վերաքննութիւնն աւարտած օրէնքը: — Գալով Քաղաքական ժողովոյ ուխտի մասին ըրած առաջարկութեան, կըսեմ թէ՛ մէկն ուխտ մը ընելու համար պէտք է լաւ վերահասու ըլլայ ինչ բանի վրայ որ պիտի ուխտէ: Ընտրելի Պատրիարքին համար գալիք օրէնքին վրայ ուխտել կառաջարկուի Քաղաքական ժողովէն. ինչպէս կրնայ ուխտել մէկն իր չգիտցած բանին վրայ. ըսել է շատ շատ իբրև սովորութիւն մը պիտի կատարէ. բայց քանի որ Պատրիարք մը երբ սեղանին վրայ կ'ընէ, և Աստուծոյ առջև և յանուն Աստուծոյ կուխտէ, եկեղեցական ուխտ մ'է ըրածը. հետևապէս ոչ իբրև սովորութիւն կը կատարէ այս ուխտը Պատրիարք ընտրուող եպիսկոպոսը, այլ իբրև եկեղեցական ուխտ: Ուստի կը ձայնակցիմ այն երեսփոխանաց, որ նախ վերաքննութիւն և ապա Պատրիարքական ընտրութիւն կառաջարկեն: — Իսկ գալով Ինչկեան էֆ. ի ընտրելեաց ցանկին առթիւ Համագումար ժողովոյ նկատմամբ ըրած կծու ակնարկութեան, առ այս չէ թէ ՚ի դիմաց Համագումար ժողովին բացատրութիւն տալու համար կը խօսիմ, զի այս ժողովն Ընդհանուր ժողովին համար տալու պարտականութիւն չունի. այլ իբր նորա

մէկ անգամը՝ կը պատասխանեմ թէ քանի որ Համագումար ժողովը Սահմանադրութեան 2 րդ յօդուածին համեմատ դադունի քուէարկութեամբ պիտի զատէր Պատրիարքական ընտրելիները, միթէ կարելի՞ բան է առանց քուէարկութեան օրէնքը ձեռնման տակ առնելու պահանջել անկէ որ բոլոր եպիսկոպոսները քուէի առնու. ո՞չ ապաքէն օրինաց այս տրամադրութեամբ իւրաքանչիւր անգամ որչափ ուզէր այնչափ եպիսկոպոսի քուէ տալու ազատ էր և եթէ ասանկ չըլլար, արդէն եղածը դադունի քուէարկութիւն չէր ըլլար: Ուստի և այս օրէնքով դուրս մնացած եպիսկոպոսները դատապարտելի եղած չեն ըլլար: Ուրեմն Ինչկեան էֆ. ի այդ դիտողութիւնն իսպառ անտեղի է, քանի որ օրէնքին համեմատ կը շինուի Պատրիարքական ընտրելեաց ցանկն ՚ի Համագումար ժողովի:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Ինչկեան էֆ. ըսաւ թէ վիճակաւ ելածներ կան որ պէտք է հրաժարեալ ձանչցուին երեսփոխանութենէ, և թէ միւս կողմէ նորընտիրներ կան, որոնք պէտք է վաւերացուին և պակասներուն տեղն ալ լցուի. ևս ալ կը ձայնակցիմ Ինչկեան էֆ. ին, զի այս կարևոր պակասները պէտք է լրացուին, որպէս զի երեսփոխանութիւնն իւր օրինաւոր դիրքն ունենայ: Քանի որ ըսուեցաւ թէ Տեղապահէն աւելի է Պատրիարքին ազդեցութիւնը, ևս ալ կըսեմ թէ մեր սակասներն ալ լցընելով աւելի կը զօրանամք, իսկ թէ որ ասանկ ձգենք, աւելի կը տկարանամք և մեր գոյութիւնը մէջ կը խաղայ: Ասկէ զատ մեր Գիււանը՝ որ Յ3 ատենապետէ կը բաղկանայ, մէկ Ատենապետով մը մնացած է և այն ալ այսօր ներկայ չէ. Գիււանին պարտքն է անմիջապէս իւր անգամոց պակասները լրացնել տալ. նոյնպէս ժողովին նախորդ ատենադրութիւնները մեզի չեն դարհասնիր կոր. այս կէտն ալ Գիււանին ուշադրութեանը կը յանձնեմ: Ասոնք թէ և օրուան խնդրէն դուրս միջանկեալ խօսքեր են, բայց ըստ որում Ինչկեան էֆ. և այլք խօսեցան, ևս ալ անոնց հետեւեցայ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Չեմ ուզեր օրուան խնդրէն դուրս նիւթերու վրայ խօսիլ, որոնք այս պահուս Մազըլեան և Ինչկեան



էֆէնտիները կը յուզեն : Բայց զարմանօք կը նկատեմ թէ ասոնք տակաւին տարակոյս ունին Սահմանադրութեան գոյութեանը, իրր թէ Սահմանադրութիւն չունենայինք . մինչդեռ լաւ կը յիշենք թէ նախընթաց նստին մէջ, Քաղաքական ժողովոյ ընտրութեան առթիւ, Ատենապետ էֆ. քանիցս յայտարարեց թէ ըստ հրամանի Բ. Գրան Սահմանադրութեան համաձայն պիտի վարուի և անկէ չպիտի շեղուի : Հետեաբար Սահմանադրութիւն ունինք և ըստ այնմ վարուելու պարտաւոր ենք : — Գալով օրուան խնդրոյն, եթէ Վարչութիւնը նիկողայոս Սրբազանի տեղապահութեան առաջին խորհուրդն մէջ Պատրիարքական ընտրութեան ձեռնարկէր, ըսելիք մը չէինք ունենար . և դարձեալ՝ եթէ Ներսէս Սրբազանի տեղապահ ընտրութեան վայրկենին Սահմանադրութեան վերաքննութեան աւարտումը չտեսնուէր, թերևս դարձեալ ըսելիք մը չէինք ունենար . մինչ դեռ այժմ Պատրիարքական ընտրութեան ստիպողականութիւն կը տրուի ճիշդ այն վայրկենին՝ յորում Սահմանադրութեան վերաքննութիւնն աւարտած և Ընդհանուր ժողովոյ խնդրոց կարգն անցած է : Աւստի եթէ այժմ իմ ջուրէս խնդրուի, յայտնի է որ վերաքննութիւնն առաջ նկատողութեան առնելու մասին որոշակի կամք պիտի ցուցնեմ :

Սակայն խնդիրն այնպիսի վիճակ մը ստացած է, որ այս նկատողութիւնները մէկդի դնելով՝ հարկ կը լլայ Նրեստիսան էֆէնտիներուն Վարչութեան առաջարկութիւնն, այն է Պատրիարքական ընտրութեան նախադասութիւնն ընդունիլ : Մատթէոս Հայր սուրբն ըսաւ պահ մը առաջ թէ Ստեփաննոս տեղապահը երկու տարուոյ մօտ պաշտօն վարեց, իրաւ է այս . բայց այն ատեն Սահմանադրութիւն չունէինք, միայն ազգէն ընդունուած 1860 ի Սահմանադրութիւնը վերաքննութեան տակ էր, և կայսերական կառավարութեան վաւերացումը չունէր : Իսկ այսօր ունինք Սահմանադրութիւն, որ կայսերական կառավարութեանն ալ վաւերացեալ է : Միայն այս Սահմանադրութեան մէկ քանի կէտերն Ընդհանուր ժողովէս արդէն վերաքննեալ սրբազրեալ և գործադրութեան գրուած ըլլալով, այդ մասերուն կայսերական կառավարութեանն

վաւերացումը չունինք : Ահա խնդրոյն չուժման միջոցը . հարկ է որ յառաջ քան զձեռնարկութիւն Պատրիարքական ընտրութեան, (այդ վերաքննեալ մասանց վաւերացումը խնդրուի Բ. Գրան, որպէս զի Սահմանադրութեան այդ թերի մասը, որ ցարդ լրացած չըլլալով սխալ գործած ենք և այս սխալին հետեանքները կրեցինք, ամբողջանայ և նորընտիր Պատրիարքը կարենայ ուխտել Սահմանադրութեան անթերի գործադրութեանը : Այս առաջարկութիւնն նոր բան չէ, այլ Օդաէն էֆէնտի երկու առաջարկութեանց երկրորդին կրկնութիւնն է : — Բան մ'ալ կայ որ մտքէս կանցնի, պէտք է զայն ալ ըսեմ . եթէ այսօր Վարչութիւնը խոստանայ այդ սրբազրեալ մասերն ընդունել տալ Բ. Գրան, իսկ Բ. Գրան ընդհակառակն ուզէ նորընտիր Պատրիարքին կարծիքն առնուլ, ասանկ շիտթութիւն մը եթէ երևան պիտի ելնէ, ևս այժմէն կըսեմ թէ պէտք չէ որ Պատրիարքական ընտրութեան ստիպողականութիւն տրուի Վարչութեան կողմէն :

ԻՓԷՎՃԵԱՆ 4. ԷՖ. — Եթէ Օգոստին և Փափազեան էֆէնտիններուն խօսքերն ևս ընէի, իսկոյն պիտի գոչէին՝ ինչպէս ուրիշ անգամներ, թէ պետական հարուած կը հրաւիրեմ : Այս կարգի երեսփոխաններ չգիտեմ ի՞նչ բաներու վրայ հիմնելով իրենք զիրենք ձախակողմեան կանուանեն :

Տ. Ամբրոսիոս վարդապետ Իսկէնտէրեան և Օգոստին էֆ. ընդմիջելով կը բողոքեն Իփէկճեան էֆ. ի դէմ, ասելով թէ լուրջ վիճաբանութեան սահմանէն դուրս կ'ելնէ :

ԻՓԷՎՃԵԱՆ 4. ԷՖ. (շարունակելով) — Խօսքերն 'ի դուր երկարեցան . ևս պարզ դիտողութիւն մը ըրի . ասկէց առաջ հրաւիրագիր մը ստացած էինք, որուն խնդրոց կարգին մէջ դիւանին ստորադրութեան տակ գրուած էր նաև վաւերացում նորընտիր երեսփոխանաց . անկէ ետքը տեղի ունեցան 67 թդ և 68 թդ վերջին երկու նիստերը, որոնց ևս չը կրցայ ներկայ գտնուիլ, երբ Բ. Գրան հրամանաւ 67 թդ նիստը հրաւիրուեր է, դիւանը յայտարարեր է թէ միմիայն Քաղաքական ժողովոյ ընտրութեամբ պիտի գրադի ժողովը : Այդ նիստին ևս թէև ներկայ չէի, բայց

Գրան հրամանագրին տաճկերէն բնագիրն՝ որ հրատարակուած էր, կարդացի, և կրցած իս չափ հասկցայ թէ անպատճառ Քաղաքական ժողովոյ ընտրութեամբ գրադիլ չնշանակեր նոյն հրամանագիրը, մինչդեռ ժողովը թերի վիճակի մէջ կը գտնուի . ուստի նոյն օրը պէտք էր պահանջել որ Քաղաքական ժողովոյ ընտրութեանն առաջ նորընտիր երեսփոխանաց վաւերացումն ըլլայ, և ժողովին կողմութիւնը լրանայ . ևս չեմ կարծեր որ Քաղաքական ժողովոյ ընտրութեան համար Գրան ստիպել ուղեր զԸնդհանուր ժողովն, որով կարենայինք ըսել թէ կայ հարուած . բայց նորընտիր երեսփոխանաց տեղեկագիրն մինչև ցայսօր չներկայանալը չգիտեմ ի՞նչ նըպատակ ունի : Հիմա ալ նոյն վիճակին մէջ է ժողովը . մինչև այդ նորընտիր երեսփոխանաց վաւերացումը չլինի, ոչ վերաքննութեան և ոչ Պատրիարքական ընտրութեան խնդիրները յարուցանել ոչինչ կարժէ : Փափազեան էֆ. խճրճեց իմ խօսքերս, որպէս թէ ևս Սահմանադրութիւն չունինք ըսած լինիմ . ևս ըսած էի թէ ժողովը սահմանադրապէս օրինաւորութեան մէջ չէ . այս խօսքէս այնպիսի իմաստ մը երբէք չեմ չէր . դժբաղդաբար շատ գէշ սովորութիւն մը դարձած է երեսփոխանացս մէջ, մէկուն չըսած խօսքերն անոր բերանին մէջ դնել, այնպիսի բառերով որ լսողաց աչքերը չլացունեն : Վերջապէս ամփոփելով խօսքս կեդրակացնեմ թէ առանց նորընտիր երեսփոխանաց վաւերացումը կատարելու քայլ մը առնուլ կարող չէ ժողովը :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Անոնք որ նորընտիր երեսփոխանաց վաւերացման մինչև ցարդեա մնալուն համար դիտողութիւն ըրին, շատ իրաւունք ունին . պէտք է որ այդ վաւերացումն ըլլայ, հոգ չէ թէ որ Պատրիարքի ընտրութեան գործը քանի մի շաքաթ երկարի, հերիք է որ օրինաւորութիւնը տեղն երթայ : Ուստի ամեն բանէ առաջ հարկ է նորընտիր երեսփոխանները վաւերացնել, և վիճակաւ ելածներուն տեղ ընտրութիւն չընող թաղեր եթէ կան, զանոնք ալ հրաւիրել որ ընտրութիւնները փութացնեն : Պահ մը առաջ ըսի թէ Տեղապահի գոյութիւնն առժամանակեայ Վարչութեան գոյութիւնն է . ասի այնչափ

ճշմարիտ է որ ուրանալու տեղի չկայ . բայց ի՞նչ է մեր առժամանակեայ վիճակն եթէ ունինք, պէտք է բացատրեմ : Մեք գիտէինք որ Սահմանադրութեան 99 թդ յօդուածին տրամադրութեան համեմատ երբ փորձառութեամբ ինչ ինչ յօդուածոց փոփոխութեան պէտքը նշմարուի, պէտք է վերաքննել . երբ Խրիմեան Սրբազան Պատրիարքը ընտրուեցաւ, ընդհանուր համոզում կար թէ այս Սահմանադրութիւնը գործադրելի չէ, անոր համար ոգին և սկզբունքը յարգել և վառ պահել ուղեւցաւ . և ըստ այնմ ուխտեց Խրիմեան Սրբազան : Այսօր չունինք և չենք ուղեր ունենալ այնպիսի մարմին մը՝ որ Սահմանադրութեան ոգւոյ և տառի խտրութիւն դնէ : Ահա ասիկայն ծանուցագիրը՝ որ Վերաքննիչ Յանձնաժողովոյ կողմէ թէ հոս և թէ գաւառները հրատարակուեցաւ թէ Սահմանադրութիւնն անթերի գործադրելի է Ընդհանուր ժողովոյ կողմէ արդէն սրբազրուած մասերովը : Մեր առժամանակեայ վիճակն այս է որ ընդհանուրին կողմէ սրբազրուած մասերը դեռ կառավարութեան կողմէ վաւերացուած չեն . մեք կրնանք Սահմանադրութիւնը գործադրել այն պայմանաւ որ երբ ուղենք վերաքննենք . հիմա ընդհանուր վերաքննութիւն չկայ, և կուզենք ալ որ չըլլայ : Աւստի մեք այժմ չունինք կասկած Սահմանադրութեան գործադրելիութեան վրայ որ մտածենք թէ ընտրուելիք Պատրիարքն սկզբունքին թէ տառին վրայ պիտի ուխտէ . քանի որ Սահմանադրութիւնը գործադրութեան վիճակին մէջ է, լմնցած է, Պատրիարքի ընտրութեան բնու արդելք մը չմնար եթէ վերաքննուած մասերուն վրայ Բ. Գրան հաւանութիւնը կանխաւ առնուի : Դարձեալ կը կրկնեմ Մաղլմեան էֆ. ի խօսքին դէմ մէջ բերած առարկութիւնս թէ մեր անորոջ վիճակին պատճառն օրինաց թերութիւնը չէ, այլ մեր ընթացքը . օրէնքն իս թերի են ըսելով չենք կրնար արդարանալ . օրէնքները բաց 'ի Աստուածայինէն ամենն ալ թերի են : Գալով Վարչութեան ցոյց տուած ստիպողականութեան կէտին, ևս չեմ տեսներ այնպիսի մեծ պատճառ մը որ չկարենայ Սահմանադրութեան վերաքննուած մասերը Բ. Գրան ներկայացնելու և անոր հաճութիւնն առնելու չափ ժամանակ սպասել, որն որ շատ շատ 2



ամիս կրնայ տևել. եթէ Բ. Գուռը կ'ստիպէ Պատրիարքի ընտրութիւնը, ինչպէս Վարչութիւնն ըսաւ, այդ ալ աղէկ առիթ մ'է ըսելու Բ. Գրան թէ սա՛ օրինական թերութիւնը կայ լրացնելու, ահաւասիկ շուտ մը վաւերացման հրամանը տուր որ ընտրենք Պատրիարքը: Բայց Ներսէս Արքայան չարունակեր եղեր իւր պաշտօնը. Վարչութիւնը կրնայ վերաքննուած մասերուն վաւերացման առթիւ նոր Տեղապահի մը ընտրութիւնն ալ վաւերացնել տալ: Ահա այս տեսութեամբ առժամանակեայ վիճակնիս կրնանք տեսականի փոխել և Պատրիարքի ընտրութիւնը փութացնել:

**ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷԹ.** (Արեւմտայն Բողոքական Ժողով) — Յաւ է ըսել որ մինչդեռ գալիք Պատրիարքէն հաւատարմութեան ուխտ պիտի պահանջենք, մեք չենք ուզեր հաւատարիմ մնալ օրինաց տրամադրութեանը: Սահմանադրութիւնը կը տրամադրէ որ երբ Պատրիարքական աթոռը թափուր մնայ, Տեղապահ մը կը դուրս Պատրիարքի ընտրութիւնն անմիջապէս կատարելու համար, ինչպէս Տ. Մատթէոս վարդապետ ալ պահ մը առաջ հաստատեց, եւ օրէնքը մեզի համար միշտ գործադրելի է: Ասոր դէմ վերաքննութիւնն իբր առարկութիւն մէջ կը բերուի, որ չորս տարիէն ՚ի վեր չարունակ խնդրոց կարգն անցած է եւ դեռ չէ աւարտած: Մէկ կողմէ օրէնքը չնկեր որ մեք առանց Պատրիարքի մնամք, միւս կողմէ անոնք որ Վարչութեան մէջ պաշտօն վարած են, լաւ գիտեն տեղապահութեան եւ պատրիարքութեան պաշտօններուն իրարմէ տւնեցած տարբերութիւնը: Ընդհանուր ժողովն ինչ կրաշխաւորութիւն կրնայ տալ որ երկու ամսուան մէջ վերաքննութիւնն աւարտի, Բ. Գրանէն վաւերացուի, եւ անոր համեմատ Պատրիարքի ընտրութիւն կատարուի: Վարչութիւնը չուզէր իւր առաջարկութեան ստիպողականութեան պարագաներն աւելի պարզել. չկրնար նաեւ իւր ցաւը ծածկել որ Տ. Մատթէոս վարդապետ իբրիւ Վարչութեան Արօնական ժողովոյ անդամ, եւ Պատրիարքի ընտրութեան ստիպողականութիւնը հաստատող Պառն ժողովոյ մէջ գտնուելովը հանդերձ, հոս նուազ ստիպողականութիւն կուտայ: Վերջապէս Պատրիարքի ընտրութեան ստիպողականութիւնն անժխտելի դատուած է Վարչութեան կողմէն:

եւ որպէս զի Երեսփոխանութեան առջեւ նորանոր չիտթութիւնք չյառնեն, գալիք Պատրիարքին ընելու ուխտին ձեւն ալ առաջարկեց Վարչութիւնը, եւ Պատրիարքն ո՛վ որ ալ ըլլայ չկրնար ըսել թէ չգիտցած բանին վրայ ուխտած է. քանզի ով որ ժխտէ դայս, ընտրելի պիտի չկրնայ ըլլալ:

**Տ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷԹ.** — Երեսփոխան էֆէնտիններէն այնպէս կարծուեցաւ թէ Համագումար ժողովը չկարողացաւ պատասխանել Իփէկճեան էֆ. ի ակնարկութեան. այնպէս չէ. եկեղեցական ժողովը զինքն ուրիշի համարատու չճանչնար, այլ միայն եկեղեցւոյ եւ անոր գերագոյն հեղինակութեան. հետեւապէս այնպիսի խօսքերու ընաւ կարեւորութիւն չտար: (Ահա նախաձեռնութեան րեթն 'էֆէն) Այս օրինակիւրը, որուն Սահմանադրութեան անունը տրուած է, ո՛վ կրնայ ըսել թէ գործադրելի չէ. մինչեւ ցարդ Ազգն ասով վարուեցաւ, այսօր թերի գանդներ կեննեն, եւ կուզեն անթերի օրէնք մը բերել. ո՛վ կրնայ երաշխաւորել թէ դարձեալ գալիք օրէնքն ալ անթերի չըլլայ. ես կրնամ թէ այս օրէնք գործադրելի է թէ որ կամք ըլլայ մեր կողմէն: Մեր գործունէութեան պահասութիւնն օրէնքին վրայ կը դնեմք նման գեանափոր խլուրդին, (ներուի ինձ այս օրինակը մէջ բերել, ես իմ անձիս վրայ կը խօսիմ) որ կարծելով թէ հոսը գեանէն կուգայ մինչդեռ իրմէն է, անհանդիստ կըլլայ եւ անդադար տեղ կը փոխէ:

Այս միջոցին ըողոք եւ արտուեջ կը լըսուին Ատենաբանին դէմ:

Ատենապետ էֆ. ընդմիջելով խնդրոյն դառնալու կը հրաւիրէ Ատենախօս Արքայանը:

**Տ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷԹ.** (չարանակել) — Այսպէս կրից հոսը մթնցուցած է մեզ ճշմարտութիւնն ու արդարութիւնը տեսնելու. թէ որ օրէնք մը ունինք եւ այն ալ Սահմանադրութիւնն է, ասի գործադրելի է, բաւական է որ մեր կողմէն կամք չը պակիսի. վերաքննութիւնը պատճառանք է եւ եթէ ներուի ինձ՝ կեղծիք եւ պատուակ է. այս ընթացքով կարելի չէ երբէք օրէնք մը ունենալ քանի որ գործադրելու կամք չկայ. ապա թէ ոչ մեր Սահմանադրութիւնը գործադրելի է եւ վերաքննու-

թեան կարտառութիւն չունի. անմիջապէս Պատրիարքի ընտրութիւնը պէտք է որ ըլլայ: Այն Պատրիարքը որ չուզէր այս օրէնքը գործադրել, թո՛ղ ետ քաշուի. նոյնպէս Երեսփոխանութիւնը որ չուզեր գործադրել, լաւ է որ քրօթարի. ես կը պնդեմ եւ դարձեալ կը պնդեմ թէ այս օրէնքը գործադրելի է:

Այս միջոցին քառորդ մը դադար առնելէ ետեւ Ատենաը նորէն բացուելով կը շարունակէ:

Ատենապետ էֆ. յայտարարեց թէ ըստ որում ժամանակն անցած է, թէ եւ քանի մը տտենաբաններ կան որ խօսք ուզած են, այսօր ամենայնիւ դիւանը հարկ կը համարի եղած կիճաբանութեանց ամփոփումն ընել. ուստի օտքը Ատենադպիր էֆ. ին է:

**ԱՏԵՆԱԴՊԻՐ ԵՈՒՍՈՒՅԵԱՆ ԷԹ.** — Տեսա՛րք իմ. դիւանին կողմէն խօսք առի եղած վիճաբանութեանց վրայ եզրակացութիւն մը ընելու համար: Բայց ներեցէք որ նախ կարճաօտ պատասխան մը տամ այն ակնարկութեանց որ Երեսփոխանաց ոմանց կողմէ ՚ի մէջ բերուեցան դիւանին պարտաւորութեանցը նկատմամբ, որպէս զի այս մասին եղած դիտողութիւնք անպատասխանի չմնան եւ միանգամայն նոյն դիտողութիւնն ընող Երեսփոխանք իրենց կամքը յազեցուցած ըլլան: Նախ առարկուեցաւ թէ նախորդ Ատենադրութիւնները չեն հրատարակուիր եւ թէ դիւանը պարտաւոր է զանոնք բերել: Այս մասին կը պատասխանեմ թէ (նդհանուր ժողովոյ մինչեւ ցարդ ըրած նիստերուն Ատենադրութեանց ըողոյն ալ ամբողջապէս հրատարակուած են, բաց ՚ի այս օրուան նստի Ատենադրութեանէն, որ անշուշտ դիւանը չէր կրնար մարգարէանալ եւ նիստը տեղի չունեցած ատենադրութիւնը հրատարակել . . . . միայն վերջին նստերու Ատենադրութեանց վաւերացումը մնացած է, որ թէեւ խնդրոց կարգ ալ եղած էր արդէն, սակայն ժողովոյն հաճութեանէն կախեալ էր այդ: Ուրեմն Դիւանն այս մասին իւր պարտաւորութիւնը կատարած է՝ Երկրորդ՝ առարկուեցաւ թէ Ժողովն օրինաւոր դրութեան մէջ մտցնելու համար պայմանաժամին լրացնող Երեսփոխանք պէտք էր հրատարակին եւ Դիւանին պարտաւորութիւնն էր

անմիջապէս նոր ընտրութիւնները կատարել տալ, միանգամայն նորընտիր Երեսփոխանաց վաւերացումը փութացնել, Ար պատասխանեմ թէ Դիւանն այս մասին ալ իւր ունեցած պարտաւորութիւնները կատարած է. կը յիշէք որ Դիւանն ինքը խնդրած էր ասկէց առաջ եւ Ժողովն ալ ընդունած էր որ պայմանաժամին լրացնող Երեսփոխանք շարունակեն մինչեւ որ նորերն ընտրուին եւ վաւերացուին: Իսկ նոր ընտրութեանց ետ մնալուն զալով՝ Դիւանին պարտքն էր յիշեցնել Վարչութեան եւ այս պարտքն ալ կատարած է արդէն, որպէս զի պէտք եղած թաղերուն ընտրութեան հրահանգ զրկէ, եւ այս հրահանգն ալ արդէն զրկուած է, որոնցմէ ոմանք ընտրած են եւ ընտրութեան տեղեկագիրն ալ եկած ըլլալով՝ ժողովին կը մնայ դայն վաւերացնել. իսկ ոմանք ինչ ինչ պատճառներով տակաւին ընտրութիւնը կատարած չեն: Երրորդ՝ դիտողութիւն եղաւ թէ Դիւանն իւր ամբողջութիւնը կորուսած է իւր Ատենապետներէն երկուքին հրաժարելովը, իրաւ է թէ Դիւանին համար ասի փոքր թերութիւն մը չէ, եւ տակաւին նոյն երկու հրաժարականաց ընդունուած ըլլալը կամ չըլլալն ալ յայտնի չէ. սակայն այս մասին եթէ պարտաւորութիւն մը կայ կատարելիք, այդ Դիւանինը չէ կարծեմ. Ժողովին գործն էր անոնց հրաժարականը կամ ընդունիլ եւ կամ թէ ոչ վերստին իրենց պաշտօնին կոչել: Իսկ այս պարագային մէջ իմ մասնաւոր կարծիքս է Դիւանը ըողորովին նորոգել. արդէն սահմանադրական նոր տարւոյ սկիզբն՝ որ է մայիսի ամիսը, մօտեցած է. եւ այսօրուան նիստը Ժողովոյն վերստին բացումը պէտք է համարուի, նոր սահմանադրական տարւոյ մը Ա. նիստ նկատելով, եթէ Ժողովոյն մեծամասնութիւնը պատշաճ դատէ: Վերջապէս կը տեսնէք, Տեսա՛րք իմ, որ թէեւ ինչ ինչ պարտաւորութիւններ կան՝ որք տակաւին ետ մնացած են, սակայն ասոնց յապաղումն ասոր կամ անոր պակասութիւնը չէ. այլ իրաց հանգամանքը հոս բերեր հասուցեր է: Այժմ դառնալով բուն խնդրոյն, որ է Վարչութեան ստիպողական առաջարկութիւնը Պատրիարքական ընտրութեան մասին, տեսանք որ մէկ կողմէ Բ. Գուռը հրամայած է ամեն բանէ առաջ սոյն ընտրութիւնը կատարել, եւ միւս կողմէ Վարչութիւնն



ալ այս խնդրոյն ստիպողականութեան պատճառները բացատրեց : Պանուկեցան Երեսփոխաններ՝ որք Վարչութեան առաջարկութեան ընդդէմ խօսեցան , առարկելով թէ նախ Սահմանադրութեան վերաքննութիւնը եւ ապա Պատրիարքի ընտրութիւնը կատարուի . ոմանք ալ թէ ամեն բանէ առաջ Ժողովն ինքզինքն օրինաւորութեան մէջ դնէ , իւր թերութիւնները լրացնելու հոգ տանի , եւ յետ այնորիկ վերաքննութեան կամ Պատրիարքական ընտրութեան մեծ խնդիրներուն ձեռնարկէ : Ըստ իս այս առարկութեանց ամենն ալ եկան տեղ մը յանդեցան , այն է համաձայնութիւն մը գոյացած կերելի Պատրիարքական ընտրութիւնն այսօր չընելու : Այս կէտն իմ վրայ լաւ ազաւորութիւն մը ըրաւ . վասն զի այն Երեսփոխաններն որ միմեանց հակակարծիք կերեւէին , այնպիսի հանգարտ ոգով քննադատեցին խնդիրը , որ իրարու միտք հասկըցան եւ զիրար լուսաբանեցին : Եթէ եղած քննութեանց մէջ ծանր կէտ մը կար , այն ալ եկեղեցական Համագումար ժողովոյ պատրաստած ընտրելեաց ցանկին վրայ թերութիւններ նշմարուին էր : Այս զիտողութիւնը թէ եւ ծանր եղանակաւ մը մէջ բերուեցաւ Երեսփոխանաց ոմանց կողմէ . սակայն չեմ կրնար նաեւ առանց նկատողութեան անցնիլ այն յայտարարութիւնը , որ նախ Տ. Մատթէոս վարդապետի եւ յետոյ Տ. Մամբրէ եպիսկոպոսի բերնէն լսուեցաւ այս առթիւ : Ըսին թէ Համագումար ժողովն Աստուծոյ ի դատ ուրիշի մը համարատու չէ :

Տ. ՄԱՄԲՐԷ ԵՊՍ. ԵՒ Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ. — Մեք եկեղեցւոյ պատասխանատու է ըսինք :

ԵՌՆՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. — Շատ լաւ . եկեղեցւոյ թող ըլլայ . բայց անտարակոյս Համագումար ժողովը բաց ի եկեղեցւոյ ուրիշին պատասխանատու չէ ըսող Ս. Հարք սխալեցան . վասն զի Սահմանադրութիւնն իրաւանց եւ պարտեաց սկզբան վրայ հիմնուած ըլլալով , ո՛ր որ իրաւունք կայ հոն պարտք ալ կայ . հետեւապէս որ եւ իցէ ժողով մը կամ Ազգային պաշտօնատար մը , կուզէ աշխարհական ըլլայ կուզէ եկեղեցական , երբ իւր իրաւունքն ի դործ կը դնէ , անտարակոյս նոյն իրաւանց յարակից եղող պարտեաց համար պատասխանա-

տու կըլլայ Ազգային գերագոյն Ատենին , այսինքն Ընդհանուր ժողովին : Իսկ անոր պատասխանատուութեան սահմանն ալ խիստ զիւրին է որոշել նոյն ինքն Տ. Մատթէոս վարդապետին իփէկճեան էֆ . ի առարկութեան տուած պատասխանին մէջ , ուր ըստ իս խիստ բանաւոր կերպիւ մեկնեց Սահմանադրութեան այն յօդուածին ոգին՝ զոր իփէկճեան էֆ . տարբեր կերպիւ կըմբռնէր : Ընդհանուր ժողովը լսեց թէ՛ առարկութիւնը եւ թէ՛ պատասխանը . իրեն կը մնայ հիմա երբ ժամանակը գոյ իւր քուէոյն որոշել թէ Մատթէոս վարդապետի տուած մեկնութիւնը կարդարացնէ՞ Համագումար ժողովը թէ ո՛չ , ես կը կարծեմ թէ կարդարացնէ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴ. — Ըսի թէ յանուն Համագումար ժողովոյն չեմ խօսիր :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Ատոնք անձնական խօսքեր են . իբր զիւանին բերնէն ելած խօսք չենք ընդունիր :

ԵՌՆՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. (շարունակելով) — Եթէ Արժ. Մատթէոս վարդապետ չուզէր յանուն Համագումար ժողովոյ պատասխանած ըլլալ , կը յիշեցնեմ իրեն թէ Համագումար ժողովն ինքզինքը միշտ Ազգային Ընդհանուր ժողովոյ պատասխանատու ճանչցած է , եւ ասոր ազատեցոյն ալ շատ խնդրոց մէջ տեսնուելէ ի դատ , պահ մը առաջ պատիւ ունեցայ ՚ի Բիւրոյ Եկեղեցւոյ Համագումար ժողովն Պրեմիեր Սարգիսի Սարգիսի Վարչութեան Երեսփոխանութեան մը վրայ չկրնար ուխտ ընել , այլ ներկայ Սահմանադրութեան վրայ միայն կրնայ ուխտել . իսկ գալիք Սահմանադրութիւնն ուզէնէ կրնողունի , եւ եթէ չուզէ կը հրաժարի : Սակայն Պատրիարքի ընտրութիւնը վերաքննութեան վերջը ձգել ծանր կերեւայ . այս կէտին գալով կըսեմ թէ Վարչութիւնը թող բարեհաճի խնդիրը թողուլ այս վիճակին մէջ մինչեւ Ժողովն իւր ատենական գործողութիւնները լրացնելով ինքզինքը չէ թէ օրինաւորութեան ինչպէս ոմանք առարկեցին , այլ կանոնաւորութեան մէջ դնէ եւ յառաջիկայ նիստին պէտք եղած որոշումն ընէ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴ. — Խօսք կուզեմ այս մասին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Խօսք չկայ . ատոնք անձնական կարծիք են ըսի , իբր զիւանի խօսք չենք կրնար ընդունիլ :

Այս միջոցին ձայները կը բարձրանան եւ բարձրագոյն բողոքներ կը լսուին Փափաղեան եւ Քրիստոսաուր էֆէնտիներու կողմէն թէ եկեղեցականաց դէմ յարձակումներ կը լինին : Դիւանը միջամտելով հազիւ կը լուսնէ այս ձայները , ինչպէս եւ իփէկճեան էֆէնտին՝ որ բողոքողաց դէմ պատասխանել կուզէր :

ԵՌՆՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. (շարունակելով) — Դատնալով օրուան կարգին , ինչպէս արդէն ըսի , Պատրիարքական ընտրութիւնն անմիջապէս չընելու մասին կարծիքները համաձայնած կերեւին . բայց այս մասին զանազան գոյներու տակ պատճառներ ներկայացուցան . ըստ իս եթէ մեծագոյն մասը ընտրութիւնն ալ որոշէ , դարձեալ այսօր չենք կրնար ընել , վասն զի այնպիսի անհրաժեշտ գործողութիւններ կան , որ ժողովին ատենական բարեկարգութեանը կը վերաբերին , եւ դորս ամենէն առաջ կատարել պէտք է : Այս գործողութիւններն են վաւերացում նախօրդ Ատենագրութեանց եւ նորընտիր Երեսփոխանաց , եւ կազմութիւն զիւանին : Ես կառավարեմ որ Ժողովը միաձայնութեամբ յայտարարէ Վարչութեան թէ իւր առաջարկած երդման ձեւը չկրնար ընդունուիլ , որովհետեւ եկող Պատրիարքը գալիք Սահմանադրութեան մը վրայ չկրնար ուխտ ընել , այլ ներկայ Սահմանադրութեան վրայ միայն կրնայ ուխտել . իսկ գալիք Սահմանադրութիւնն ուզէնէ կրնողունի , եւ եթէ չուզէ կը հրաժարի : Սակայն Պատրիարքի ընտրութիւնը վերաքննութեան վերջը ձգել ծանր կերեւայ . այս կէտին գալով կըսեմ թէ Վարչութիւնը թող բարեհաճի խնդիրը թողուլ այս վիճակին մէջ մինչեւ Ժողովն իւր ատենական գործողութիւնները լրացնելով ինքզինքը չէ թէ օրինաւորութեան ինչպէս ոմանք առարկեցին , այլ կանոնաւորութեան մէջ դնէ եւ յառաջիկայ նիստին պէտք եղած որոշումն ընէ :

ՄԱՋԼՄԵԱՆ Յ. ԷՅ. — Բայց ինչո՞ւ այսօր քուէարկութիւն չընենք . ինչ օրինական արգելք կայ խնդիրը քուէարկութեամբ որոշելու :

ԵՌՆՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. — Վարչութիւնն առաջարկութիւն մը բերած է եկող Պատրիարքին ընելիք ուխտին ձեւին առթիւ . միւս կող-

մէ հոս ալ առաջարկութիւն կըլլայ Վարչութեան կանխաւ վաւերացնել տալ Դրան Ազգային Սահմանադրութեան արդէն սրբագրուած քանի մը կէտերը : Չգիտեմք Վարչութիւնն ինչ զիտողութիւն պիտի ընէ այս մասին , եւ չեմ յուսար որ այսօրու չէ կարենայ որոշ պատասխան մը տալ :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՅ. (Արեւմտեայ Քաղաքէն) — Ընդհանուր ժողովը թող բարեհաճի գրով տալ իւր հարցումը , եւ գրով առնուլ մեր պատասխանը :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Արդեօք մինչեւ Ընդհանուր ժողովոյ առաջակայ նիստը յանձն կանոնու Վարչութիւնը Սահմանադրութեան արդէն սրբագրուած կէտերուն վաւերացումը Բ. Դրնէն բերել :

ԵՌՆՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. — Կուզէ՞ք որ առաջարկուի Վարչութեան վերաքննուած մասերուն վաւերացումը ներկայացնել Բ. Դրան :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Այո՛ . եւ եթէ ընդունի Վարչութիւնը , այն ատեն Պատրիարքը կրնանք ընտրել : Կառավարեմ որ վերաքննուած մասերուն Բ. Դրան ներկայացուելու կէտը քուէի դրուի :

ԵՌՆՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. — Դիւանը կը պարտաւորի Ժողովոյն կամքն հարցնել այս մասին :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՅ. Երեսփոխանութեան Երեսփոխանաց — Ամենեւին եւ ամենեւին քուէարկութիւն չըլլար . ծանր խնդիր է այս , պէտք է որ տակաւին լուսաբանուինք այս մասին :

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԱՐԴ. ԻՍԿԷՆՏԷՐԵԱՆ. — Իփէկճեան էֆ . ին առարկութիւնն ալ քուէի գրէք . թող հասկցուի թէ խնդիրը լուսաբանուած է արդեօք թէ տակաւին խաւարի մէջ է :


Այս միջոցին քուէի դնելու չը դնելու խառն ձայները երեսփոխանաց ոմանց ոտք ելանելովը ազմկալից կերպարանք մը տալով Ժողովին , միւս կողմէ հանդիսատես ժողովրդեան մէջէն ալ բարձրաձայն աղաղակներ փրթելով , եւ արդէն օրը տարածամած ըլլալով , դիւանը կը պարտաւորի գոցել ատենադ ժամը 10 1/4 ին :



Ատեանը գոցուելէ ետեւ ներկայ գրտ-  
 նուոյ երեսփոխանաց հարցմանը պատասխա-  
 նելով զիւանը յայտարարեց թէ յաջորդ նիստն  
 առաջակայ Զատիէն ետեւ երկրորդ ուրբաթին  
 հաղիւ պիտի կարենայ գումարիլ, եւ խնդրոց

կարգը զիւանն ինք պիտի պատրաստէ վար-  
 չութեան հետ բանակցելէ ետեւ :

|                   |                          |
|-------------------|--------------------------|
| Արեւիկայի         | Ա. Ժամակիւյ              |
| ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՑԵԱՆ | Արեւիկայ                 |
|                   | ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ ՅՈՎ. ԱԿԻՄԵԱՆ |





ԳԻՆ Զ ՆՈՒՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿՈՒՆ

Կը ծախուի 'ի Դիւ անատան Պատրիարքարանի, և կը գտնուի  
ամեն գրաւաճառաց քով և Եկեղեցեաց բանկաները :